ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/178/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 27 օգոստոսի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի, 2025 թվականի օգոստոսի 27-ին քննելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արմենուհի Սամվելի Բադիրյանի ընտանիքի անդամ Հայկ Ռուբենի Ալումյանի կողմից 2024 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/178/2025 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով

պարզել է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արմենուհի Սամվելի Բադիրյանի ընտանիքի անդամ Հայկ Ռուբենի Ալումյանի 2024 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 Հայկ Ռուբենի Ալումյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում Հանձնաժողով չի ներկայացրել Հայտարարագիրը:

1.3 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունիսի 10-ին թիվ 01/2380/1-2025 գրությամբ Հայկ Ալումյանին ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Նշված ծանուցումը Հայկ Ալումյանի կողմից ստացվել է 2025 թվականի հունիսի 21-ին: Սակայն ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, համապատասխան հայտարարագիրը չի ներկայացվել:

1.4 2025 թվականի հուլիսի 30-ի թիվ 01/3003-2025 գրությամբ Հայկ Ալումյանը գրավոր ծանուցվել է այն մասին, որ առերևույթ թույլ տրված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված և վերը նշված փաստական հիմքերով Հանձնաժողովում իր նկատմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ՝ առաջարկելով գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին ներկայանալ Հանձնաժողով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն մասնակցելու, իսկ գրությունը ստանալուց հետո՝ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 15:00-ին, գործի քննությանը մասնակցելու նպատակով:

Նշված ծանուցումն ուղարկելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողովը չի ստացել ծանուցումն ստանալու մասին հետադարձ հավաստումը և 2025 թվականի օգոստոսի 14-ին այն տեղադրել է azdarar.am կայքում: Միաժամանակ, Հայկ Ալումյանի կողմից ծանուցման ստացման վերաբերյալ հավաստումը ՀայՓոստի կողմից Հանձնաժողով է ներկայացվել 2024 թվականի օգոստոսի 16-ին, ինչպես նաև Հանձնաժողովի վերոգրյալ

գրության ստացման, ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն մասնակցելու անհնարինության մասին Հայկ Ալումյանը տեղեկացրել է Հանձնաժողովին՝ ուղարկելով նամակ info@cpcarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեին: Թեև Հանձնաժողով ներկայացված էլեկտրոնային նամակը չի պարունակում արձանագրություն կազմելը կամ գործի քննությունը հետաձգելու մասին միջնորդություն, այնուամենայնիվ, առաջնորդվելով վարչական վարույթում անձի լսված լինելու իրավունքի ապահովման պարտականությամբ՝ Հանձնաժողովը որոշել է հետաձգել Արձանագրություն կազմելու, ինչպես նաև գործի քննության օրը և ժամը:

1.5 Հանձնաժողովի՝ 2025 թվականի օգոստոսի 19-ի թիվ 01/3250-2025 գրությամբ Հայկ Ալումյանը հրավիրվել է մասնակցելու 2025 թվականի օգոստոսի 25-ին՝ ժամը 11:00-ին, նշված փաստերի առնչությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը, իսկ օգոստոսի 27-ին՝ ժամը 15:00-ին, նշված փաստերի առնչությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը:

1.6 2025 թվականի օգոստոսի 25-ին պատշաճ ծանուցված Հայկ Ռուբենի Ալումյանի ներկայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ 136/24 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.7 2025 թվականի օգոստոսի 27-ին Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին Հայկ Ալումյանի կողմից ուղարկվել է հաղորդագրություն, որով վարույթի մասնակիցը հավաստել է վարչական իրավախախտման վերաբերյալ նշանակված գործի քննության տեղի, օրվա և ժամի վերաբերյալ ծանուցված լինելու մասին, միաժամանակ խնդրել է գործի քննությունն իրականացնել իր բացակայությամբ:

1.8 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Հայկ Ալումյանի բացակայությամբ 2025 թվականի օգոստոսի 27-ին՝ ժամը 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումները ու պարզաբանումները

2025 թվականի օգոստոսի 25-ին արձանագրության կազմման ընթացքում Հայկ Ալումյանը ներկայացրել է դիրքորոշում, համաձայն որի՝ օրենքն իր համար վերջնաժամկետ չի սահմանում, և պետությունն իրենից պահանջում է այնպիսի տվյալներ լրացնել, որի տիրապետողը հենց ինքն է և հայտարարագրի ձևը հնարավորություն չի տալիս լրացնել բացառապես այն տվյալները, որոնց պետությունը չի տիրապետում, այն է՝ կանխիկ գումարը, օտարերկրյա պետություններում գույքը, թանկարժեք գույքը և այլն:

Միաժամանակ 2025 թվականի օգոստոսի 27-ին Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված հաղորդագրությամբ Հայկ Ալումյանը խնդրել է հաշվի առնել նաև հետևյալ հանգամանքները.

«1. Ինչպես և նախկինում, այժմ ևս պատրաստակամ եմ տրամադրելու լիազորագրեր՝ իմ գույքային դրության վերաբերող ցանկացած տվյալ ցանկացած աղբյուրից ձեռք բերելու համար,

2. Կան տվյալներ, որոնք Հանձնաժողովը, նույնիսկ լիազորագրի առկայության դեպքում, հնարավորություն չունի ձեռք բերելու (օրինակ՝ կանխիկ գումարի չափը, թանկարժեք առարկաներ): Այդ տվյալները ես պատրաստ եմ հայտարարագրել, սակայն հայտարարագրի ձևը հնարավորություն չի տալիս լրացնելու միայն այդ տվյալները, այսինքն՝ այդպիսի տվյալներ հայտարարագրում լրացնելու դեպքում ես ստիպված եմ լինելու լրացնել նաև այն տվյալները, որոնց Պետությունը տիրապետում է (օրինակ՝ անշարժ գույքի վերաբերյալ տվյալները): Գտնում եմ, որ Պետության պարտականությունն է՝ մշակել ու կիրառել հայտարարագրի այնպիսի ձև, որը զերծ կլինի այս թերությունից:»

III.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/178/2025 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արմենուհի Սամվելի Բաղիրյանի ընտանիքի անդամ Հայկ Ռուբենի Ալումյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2024 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա

ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

VI. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արմենուհի Սամվելի Բաղիրյանի ընտանիքի անդամ Հայկ Ռուբենի Ալումյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար::

4.3 Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անդամի, ինչպես նաև սույն հոդվածի 5.1-ին կետով սահմանված դեպքերում հայտարարագրերը սույն օրենքի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված պահանջների, կարգի և ժամկետների պահպանմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով չներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

4.4 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:

4.5 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն

ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.11 Օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում, անդրադառնալով վարույթի մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշմանը, Հանձնաժողովն արձանագրում է.

«Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար: Ընդ որում, Օրենքի 39-41-րդ հոդվածներով (պաշտոնատար անձանց պարագայում՝ նաև Օրենքի 42-րդ հոդվածով) իմպերատիվ կերպով սահմանված է հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը:

Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անդամի, ինչպես նաև սույն հոդվածի 5.1-ին կետով սահմանված դեպքերում հայտարարագրերը սույն օրենքի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից սահմանված պահանջների, կարգի և ժամկետների պահպանմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով չներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Նշված իրավակարգավորումներից հետևում է, որ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն իրենց հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը պարտավոր են կատարել հայտարարատու պաշտոնատար անձի կողմից հայտարարագիր ներկայացնելու պարտականության համար սահմանված կարգով և ժամկետներում: **Ընդ որում, անձնական պատասխանատվության սկզբունքի, անձնական տվյալների պաշտպանության հաշվառմամբ, ինչպես նաև պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամի հայտարարագրերի բովանդակության տարբերության պատճառով տեխնիկական լուծումների, ինչպես նաև կիրառելի նորմատիվ իրավական ակտերի միջոցով ապահովվել է հայտարարատու անձանց առանձին ծանուցումը և հայտարարագիրը միմյանցից անջատ ներկայացնելու հնարավորությունը, ինչը սակայն չի կարող մեկնաբանվել որպես հայտարարատու պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների կողմից հայտարարագիր ներկայացնելու օրենքով ժամկետ սահմանված չլինելու մասին:**

Օրենքի 34-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ հայտարարագրի ձևանմուշը սահմանում է Կառավարությունը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությամբ:

Կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի N 102-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրի, հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի և եկամուտների, հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրի օրինակելի ձևերը:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, ինչպես նաև հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Ընդ որում, իրավունքի սուբյեկտների վարքագծի հետևանքների կանխատեսման առումով հայտարարագրմանն առնչվող խախտումների համար նախատեսված է ինչպես վարչական, այնպես էլ քրեական պատասխանատվություն: Ավելին, օրենսդիրը ինչպես վարչական (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդված), այնպես էլ քրեական (ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ և 314.3-րդ հոդվածներ, 01.07.2022 թվականի ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդված) պատասխանատվություն սահմանելիս՝ ամրագրել է «հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ» եզրույթը: Ավելին, մինչև 2020 թվականի մայիսի 2-ը գործող խմբագրությամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասը պարունակել է «Հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից (սույն հոդվածում այսուհետ՝ հայտարարատուներ) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայտարարագրերը» նախադասությունը, միաժամանակ մինչև 2020 թվականի մայիսի 2-ը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 314.2-րդ և 314.3-րդ հոդվածները ևս պարունակել են «Հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից ««Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայտարարագրերը» եզրույթը:

Միաժամանակ, տեղեկատվական բազայի փոխգործարկելիության և հայտարարագրման ենթակա տվյալներին Հանձնաժողովի առցանց հասանելիության պարագայում անգամ հայտարարագրերի էլեկտրոնային համակարգում ինքնաշխատ եղանակով ներբեռնվող տվյալները հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող սուբյեկտներին հասանելի են խմբագրման ռեժիմով, այսինքն Հանձնաժողովն ապահովում է տվյալների ինքնաշխատ եղանակով ներբեռնում, որպիսի պարագայում վերջիններս պարտավոր են ինքուրույն հաստատել տվյալը՝ հիմք ընդունելով Օրենքով սահմանված՝ դրանց իսկության համար պատասասխանատու լինելու պահանջը:

Վերոնշյալ իրավանորմերից հետևում է, որ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը պարտավոր է Կառավարության կողմից սահմանված ձևանմուշին համապատասխան հայտարարագրերը Օրենքով և Կոռուպցիայի

կանխարգելման հանձնաժողովի որոշմամբ սահմանված պահանջների, կարգի և ժամկետների պահպանմամբ ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որպիսի պահանջները պատասխանատու սուբյեկտի կողմից չպահպանելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Անդրադառնալով վարույթի մասնակցի այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ վերջինս պատրաստակամ է տրամադրելու լիազորագրեր՝ իր գույքային դրության վերաբերող ցանկացած տվյալ, ցանկացած աղբյուրից ձեռք բերելու համար՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձագրել, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով Հանձնաժողովին նման իրավունք կամ պարտականություն վերապահված չէ, ինչպես նաև հայտարարագիր ներկայացնելու այդպիսի ընթացակարգ սահմանված չէ: Անձի՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը բխում է օրենքից և կրում է անհատական բնույթ: Հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը չի կարող պայմանականորեն փոխարինվել այլ գործընթացով, քանի որ այն անմիջականորեն դրված է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի վրա: Հետևաբար, Հայկ Ալումյանի այն պնդումը, թե հնարավոր է լիազորագիր տալ հենց վարչական մարմնին՝ իր վերաբերյալ տվյալները ստանալու համար, իրավական հիմք չունի:

Ուստի, հայտարարագիր ներկայացնելուց հրաժարվելը այն պատճառաբանությամբ, որ վարչական մարմինը կարող է լիազորվել տվյալներ ստանալու համար, իրավականորեն անընդունելի է և չի կարող դիտարկվել որպես օրենքով սահմանված պարտականության պատշաճ կատարում:

Բացի այդ, Հանձնաժողովն ընդգծում է, որ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից Հանձնաժողովին լիազորագիր տալն իր էությամբ առարկայազուրկ է, քանի որ հայտարարագրման էլեկտրոնային համակարգն ապահովված է պետական մարմինների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված տեղեկատվական բազաների հետ փոխգործարկելիության և հայտարարագրման ենթակա տվյալների ինքնաշխատ ներբեռնման հնարավորությամբ: Սակայն պետական մարմիններում առկա տվյալների՝ ինքնաշխատ եղանակով ներբեռնումը համապատասխան հայտարարագրում, ինքնին բավարար չէ հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը կատարված համարելու համար, քանի որ «Հանրային ծառայության

մասին» օրենքը սահմանում է հայտարարագրման ենթակա տվյալների ցանկը, որն ամբողջությամբ չէ, որ մշակվում է պետական լիազոր մարմինների կողմից: Որպես օրինակ, անհրաժեշտ է նշել, որ դիցուք տրանսպորտի միջոցի օտարման կամ ձեռքբերման գործարքի վերաբերյալ տվյալներն ինքնաշխատ ներբեռնվում են ՀՀ ՆԳՆ ոստիկանության տեղեկատվական շտեմարանից, սակայն այդ շտեմարանը չի պարունակում որևէ տվյալ գործարքի կողմերի միջև առկա կապի բնույթի մասին, ինչը պարտադիր լրացման ենթակա տվյալ է և պետք է հայտարարագրվի հայտարարատու կողմից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով: Այս դրույթից բխում է, որ իրավախախտման առարկան հայտարարագրի ներկայացման պարտականության չկատարումն է ոչ թե օրենքով սահմանված նախնական ժամկետներում, այլ այն պարագայում, երբ այդ ժամկետները լրանալուց հետո հայտարարատուն Հանձնաժողովի կողմից գրավոր ծանուցված լինելով հանդերձ շարունակում է չներկայացնել հայտարարագիրը: Նման կարգավորմամբ օրենսդիրը սահմանել է լրացուցիչ հնարավորության մեխանիզմ հայտարարագիր ներկայացնելու պարտականության կատարման համար, և միայն այդ լրացուցիչ հնարավորության անտեսման պարագայում են առաջանում վարչական իրավախախտման հատկանիշները:

Այս համատեքստում Հայկ Ալումյանի այն դիրքորոշումը, թե օրենքն իր համար վերջնաժամկետ չի սահմանում և, հետևաբար, հայտարարագիր չներկայացնելու դեպքում իրավախախտման փաստ առկա չէ, իրավաչափ և հիմնավորված չէ: Օրենսդրական կանոնակարգումն իր բովանդակությամբ բացառել է նման մեկնաբանությունը, քանի որ հենց Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով հստակ ամրագրված է իրավախախտման հատկանիշը. ոչ թե օրենքով

սահմանված ժամկետում չներկայացնելը, այլ՝ Հանձնաժողովի գրավոր ծանուցումից հետո՝ 30-օրյա լրացուցիչ ժամկետում, պարտականությունը չկատարելը:

Հետևաբար, Հայկ Ալումյանի վարքագիծը՝ հայտարարագիր չներկայացնելով, Հանձնաժողովին լիազորագիր տրամադրելու առաջարկով հանդես գալով և նման կերպ փորձելով հիմք ստեղծել սեփական պարտականության շրջանցման համար, չի կարող իրավաչափ համարվել:

Տվյալ դեպքում, գործում առկա ապացույցների համաձայն՝ Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունիսի 10-ին Հայկ Ալումյանին գրավոր ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել համապատասխան հայտարարագիրը:

Ծանուցումը Հայկ Ալումյանի կողմից ստացվել է 2025 թվականի հունիսի 21-ին: Սակայն, գրավոր ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հայտարարագիրը վերջինիս կողմից չի ներկայացվել Հանձնաժողով:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող, ինչպես նաև 33-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող որևէ հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2024 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Հայկ Ռուբենի Ալումյանի

նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ ***200 000 ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայկ Ռուբենի Ալումյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**